պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Նույն մասով նախատեսված ժամկետում **պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված**:

Տվյալ դեպքում պատասխանողը ստանալով Դատարանի կողմից հասցեագրված որոշումը՝ չի կատարել Դատարանի՝ ապացույց պահանջելու մասին 03.08.2023 թվականի որոշման պահանջները, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով հայցվորի կողմից վկայակոչված փաստերը, որոնք ենթակա էին հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Սույն գործով հայցվորի կողմից վկայակոչված փաստերի հաստատված ճանաչելը հանգեցնում է հայցի բավարարմանը, որպիսի պայմաններում դատարանը հանգում է այն եզրակացության, որ Քաղաքապետարանի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.06.2023 թվականի թիվ 1553-Ա որոշումը ենթակա է անվավեր ճանաչման:

5. Դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված պահանջին:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ հայցը բավարարվելու պարագայում պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի համար նախապես վճարված գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ և 198-րդ, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.06.2023 թվականի թիվ 1553-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել՝

անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.06.2023 թվականի թիվ 1553-Ա որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կատարում պահանջող մասով կամովին չկատարելու դեպքում կկատարվի ՀՀ հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**